ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

BOOK REVIEWS

DOI 10.52837/27382702-2022.2-169

ARAM KOSYAN, "THE HITTITE KINGDOM (POLITICAL HISTORY)", YEREVAN, 2022, COPY-PRINT PUBLISHING, MAPS, NOTES, BIBLIOGRAPHY, INDEX. 252 P., DOI: 10.54503/978-9939-9012-5-1

Hasmik Hmayakyan

Aram Kosyan's "The Hittite Kingdom (Political History)" presents the military and political history of the Hittite Empire from the moment of its beginning (18th-17th centuries BC) until its disintegration in the late 13th century BC. The four chapters of this work presents a detailed study of the Hittite kings' rule and activities, various aspects of military and political history of that powerful state according to the chronology and historical periodization accepted in science, based on the study and analysis of the preserved written sources, materials given by enormous bibliography of the field. Such a comprehensive study covering the history of the Hittite kingdom, incorporating the latest achievements of historical science regarding the history of ancient Anatolia, was carried out and published in the Armenian language for the first time.

The Hittite state which came into existence in the 18-17th centuries BC in Asia Minor, was powerful enough to incorporate the entire peninsula of Asia Minor within a single political unit, overcoming numerous challenges of foreign, internal political and intra-dynastic character, which are explored in the given work. During the 500 years of its military and political history, the Hittites developed diverse relations with their immediate and distant neighbors, such as polities located in different parts of Asia Minor, Babylonia, Egypt, Mittani, Assyria: these aspects are also thoroughly analyzed and presented in this study, revealing the important role of the Hittite state in the Near Eastern politica-cultural space, at the same time being its inalienable part.

This work is valuable also in respect of exploration of a number of important and problematic issues related to Armenian studies. The Hittite civilization's importance is significant for the study of the political units that existed in the 2nd millennium BC in the western regions of the Armenian Highlands, a region neighboring Asia Minor. Since the 1920s, a number of researchers have put forward, among other concepts, the "Hayasa hypothesis" of ethogenesis of the Armenian people that circulates to this day and relates to Hayasa, a political unit located in the neighborhood of the Hittite kingdom: it was considered a possible cradle of ethnogenesis of the Armenians. It should be noted that such political units as Hayaša, Azzi, Išuwa were the carriers of the influence of Hittite civilization. In general, as the author mentions: "The Hittite cuneiform texts of the XV-XIII centuries BC are

the only written sources of the western Armenian Highlands history, which indeed are invaluable primary sources in this regard”.

The researcher’s merit is enormous in regard of a novice study, corrections and own interpretations of those sources. Particularly the sub-chapters "Tudhaliaš and Hayaša", "Muršiliš and Hayaša", "Sister Kingdoms of Tarhuntašša and Išuwa" are of particular interest, which describe these relationships on the basis of the Hittite sources. The study contains the author's important concepts, new interpretations and valuable conclusions regarding the above issues.

The work is also significant in a sense of using by the author the data of all recent special literature, a coverage of a wide range of Hittite-related issues as well as a list of personal names, toponyms, subjects, and maps enclosed at the end of the book.

The work of the distinguished scholar is a noteworthy contribution to the field of Hittite studies in general, besides that it may serve as a remarkable impetus for the development of Hittite studies in Armenia.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆԻ «ԽԵԹԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ)» ԵՐԵՎԱՆ, «ՔՈՓԻ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2022 Թ., 252 ԷՋ, DOI: 10.54503/978-9939-9012-5-1, ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հասմիկ Հմայակյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամ Քոսյանի «Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն)» աշխատության մեջ ներկայացված է Խեթական պետության ռազմաքաղաքական պատմությունը՝ իր սկզբնավորման պահից (Ք. ա. XVIII-XVII դդ.) մինչև վերջինիս տրոհումը մ.թ.ա. XIII դարի վերջերում: Աշխատության չորս գլուխներում հանգամանալից կերպով, ըստ խեթական տերության պատմության փուլաբաժանման առումով գիտության մեջ ընդունված ժամանակագրության ու խեթական արքաների գահակալման և վարած գործունեության, ներկայացված է այդ հզոր տերության բազմաբովանդակ ռազմաքաղաքական պատմությունը՝ պահպանված գրավոր աղբյուրների, մասնագիտական լայնածավալ գրականության տվյալների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա: Խեթական տերության պատմության վերաբերյալ հայերեն լեզվով նման համապարփակ, տվյալ բնագավառին

վերաբերող գիտական նորագույն տվյալների համտեքստում կատարված ծավալուն ուսումնասիրություն իրականացվում է առաջին անգամ:

Փոքր Ասիայում Ք.ա. XVIII-XVII դարերում ձևավորված Խեթական տերությունը կարողացել է մեկ քաղաքական միավորի մեջ ներառել ողջ Փոքր Ասիա թերակղզին՝ հաղթահարելով բազմաթիվ արտաքին քաղաքական և ներքաղաքական, ինչես նաև ներդինաստիական խնդիրներ, որոնք լայնորեն լուսաբանված են աշխատության մեջ: Այն իր գոյության և ռազմաքաղաքական պատմության շուրջ 500 տարիների ընթացքում բազմաբնույթ և բազմակի առնչություններ է ունեցել մի շարք պետությունների հետ, ինչպիսիք են Բաբելոնը, Եգիպտոսը, Միտտանին, Ասորեստանը, և այս հարցերը ևս համակողմանիորեն վերլուծվել և ներկայացվել են սույն ուսումնասիրության մեջ՝ բացահայտելով խեթական տերության ունեցած կարևորագույն դերը Առաջավորասիական քաղաքակրթության շրջանակներում, որի անբաժանելի մասն էր կազմում վերջինս:

Աշխատությունը արժեքավոր է նաև հայագիտությանը վերաբերող մի շարք կարևոր և խնդրահարույց հարցերի ուսումնասիրության տեսանկյունից: Խեթական քաղաքակրթությունը կարևորագույն նշանակություն ունի Փոքր Ասիայի հարևան Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում Ք.ա. II հազարամյակում գոյություն ունեցած քաղաքական միավորների պատմության ուսումնասիրման համար: Գիտության մեջ դեռևս անցյալ դարի 20-ականներից մի շարք ուսումնասիրողների կողմից առաջ է քաշվել և առ այսօր, ի թիվս այլ վարկածների, շարունակում է շրջանառվել հայոց ազգածագման «Հայասական» վարկածը, որը կապված է խեթական տերության հարևանությամբ գտնված Հայասա քաղաքական միավորի հետ. այն համարվել է հայոց ազգածագման հնարավոր բնօրրաններից մեկը: Հարկ է նշել, որ Հայասա, Ազզի, Իսուվա քաղաքական միավորները իրենց վրա կրել են խեթական քաղաքակրթության զգալի ազդեցությունը: Այս առումով հարկ է առանձնացնել հեղինակի կարևոր այն միտքը, որ. «Մ.թ.ա. XV-XIII դարերի խեթական սեպագիր տեքստերը հանդիսանում են Հայկական Լեռնաշխարհի արևմուտքի պատմության միակ գրավոր աղբյուրները, որոնք անգնահատելի սկզբնաղբյուրներ են»:

Մեծ է գիտնականի վաստակը նաև այդ սկզբնաղբյուրների նորովի ուսումնասիրության, ճշգրտումների ու սեփական մեկնաբանությունների առումով: Առանձնապես հետաքրքրական են «Թուդխալիյասը և Հայասան», «Մուրսիլիսը և Հայասան», «Թարխունտասսայի և Իսուվայի քույր թագավորությունները» ենթագլուխները, որոնցում վերոնշյալ աղբյուրների հիման վրա ներկայացված

DOI: 10.54503/978-9939-9012-5-1

են այդ առնչությունները: Ուսումնասիրության մեջ տեղ են գտել հեղինակի կարևոր մոտեցումները, նորովի լուսաբանումներն ու արժեքավոր եզրահանգումները վերոնշյալ հարցերի վերաբերյալ:

Աշխատությունը կարևորվում է նաև հրապարակի վրա եղած բազմալեզու մասնագիտական նորագույն գրականության կիրառմամբ, խեթագիտության բնագավառի ուսումնասիրությունների լայն ցանկի, ինչպես նաև գրքի վերջում առկա անձնանունների, տեղանունների ու անվանացանկերի, քարտեզների առկայությամբ:

Վաստակաշատ գիտնականի այս աշխատությունը կարևոր ներդրում է խեթագիտության բնագավառում ընդհանրապես, և նշանակալի խթան կարող է հանդիսանալ Հայաստանում խեթագիտության զարգացման առումով:

Hasmik Hmayakyan
Institute of Oriental Studies of NAS RA
hhmayakyan@yahoo.com

ORCID: 0000-0002-2486-9937